ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 12

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

Ք. Երևան

«Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիա» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ՀՖՖ) Կարգապահական և էթիկայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նիստը (այսուհետ՝ նիստ) կայացավ 2021թ. դեկտեմբերի 1-ին, ՀՀ, ք. Երևան, Խանջյան 27 հասցեում:

Նիստին մասնակցում էին՝	
Կոմիտեի անդամներ	
Կարեն Հովհաննիսյան	Կոմիտեի նախագահ
Բաբկեն Ղալոյան	Կոմիտեի անդամ
Արման Ալաբերքյան	Կոմիտեի անդամ
Հայկուհի Ռշտունի	Կոմիտեի անդամ, Կոմիտեի քարտուղար

Կոմիտեի նիստին մասնակցում են Կոմիտեի անդամներից 4-ը, հետևաբար, ղեկավարվելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ) 7-րդ հոդվածի 7.01 համաձայն Կոմիտեն իրավազոր է:

Նիստն արձանագրում է Կոմիտեի անդամ, քարտուղար Հ. Ռշտունին:

Կոմիտեի նախագահը ներկայացրեց Կոմիտեի նիստի օրակարգում ընդգրկված՝ ներքոնշյալ հարցերը:

Կոմիտեի անդամների կողմից օրակարգի վերաբերյալ առարկություններ կամ առաջարկություններ չեն ստացվել, ուստի օրակարգը համարվել է հաստատված:

Կոմիտեն, ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 3-րդ հոդվածով, 4-րդ հոդվածի 4.01, 4.02 կետերով, 5-րդ հոդվածի 5.01 կետով, 20-րդ հոդվածով, 21-րդ հոդվածի 21.04 կետով, 28-րդ հոդվածի 28.01 կետով, օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ կայացրեց հետևյալ որոշումը.

1. **24/11/21թ. «Նորավանք»-«Արարատ-Արմենիա» (ԳԽ006) խաղին «Նորավանք» թիմի բժիշկ Արման Հակոբյանի (N 37755) հեռացման մասին (դեպի խաղադաշտ շիշ նետելու համար)**

Կոմիտեն քննարկումների արդյունքում՝ 4 կողմ և 0 դեմ ձայներով որոշեց՝

Հիմք ընդունելով ՀՖՖ Կանոնակարգի 38-րդ հոդվածի 38.02-րդ կետը հաստատված համարել «Նորավանք» թիմի բժիշկ Արման Հակոբյանի (N 37755) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 41-րդ հոդվածի 19-րդ կետով՝ «Նորավանք» թիմի բժիշկ Արման Հակոբյանին (N 37755) որակազրկել 2 (երկու) խաղով և «Նորավանք ՍԱ ՍՊԸ» ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ 100.000 ՀՀ դրամի չափով:

2. **20/11/21թ. «Չարենցավան-05»-«ՈՒրարտու-05» (18-17Գ015) խաղի մասին (Խաղը սկսվել է 10 րոպե ուշացումով ոստիկանների ուշ ներկայանալու պատճառով):**

Կոմիտեն քննարկումների արդյունքում՝ 4 կողմ և 0 դեմ ձայներով որոշեց՝

Հաստատված համարել «Չարենցավան-05» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 40-րդ հոդվածի 41-րդ կետով՝ «Չարենցավան մ/դպ» ակումբի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կրառել «Նկատողություն»:

Ծանոթագրություն. *ՀՖՖ Կանոնակարգի 23-րդ հոդվածի 23.02 կետ. «Նկատողություն է համարվում Կարգապահական և Էթիկայի կոմիտեի կողմից ընդունված և հրապարակված որոշումը՝ իր պարտականությունների, իր կողմից կարգապահական խախտում թույլ տալու վերաբերյալ, որի չկատարումը հետագայում հանգեցնելու է ավելի խիստ պատժամիջոցների կիրառման»:*

3. **20/11/21թ. «Սևան ՖԱ-06»-«Փյունիկ-05» (18-17Գ017) խաղի մասին (Հանդիպումը չկայացավ Սևան ՖԱ-06 թիմը չներկայացավ խաղին):**

Կոմիտեն քննարկումների արդյունքում՝ 4 կողմ և 0 դեմ ձայներով որոշեց՝

Հաստատված համարել «Սևան ՖԱ-06» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 44-րդ հոդվածի 6-րդ կետով՝ գրանցել 0:3 հաշվով տեխնիկական պարտություն «Սևան ՖԱ-06» թիմին և «Սևան ՖԱ» ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի տասնապատիկի՝ 10.000 ՀՀ դրամի չափով:

4. **19/11/21թ. «Սպարտակ-07»-«Սարդարապատ ՖԱ-07» (16-15Գ025) խաղին մասին (Խաղը չի կայացել Սպարտակ-07 թիմի չներկայանալու պատճառով):**

Կոմիտեն քննարկումների արդյունքում՝ 4 կողմ և 0 դեմ ձայներով որոշեց՝

Հաստատված համարել «Սպարտակ-07» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 44-րդ հոդվածի 6-րդ կետով՝ գրանցել 0:3 հաշվով տեխնիկական պարտություն «Սպարտակ-07» թիմին և «Տուն Ժայռի վրա» ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի տասնապատիկի՝ 10.000 ՀՀ դրամի չափով:

5. **17/11/21թ. «Նորավանք-07»-«Արտաշատ-07» (15C2012) խաղին «Նորավանք-07» թիմի ֆուտբոլիստ Սահակ Սահակյանի (N 35424) հեռացման մասին (մրցավարի հասցեին վիրավորական արտահայտության համար) և «Նորավանք-07» թիմի մարզիչ Խորեն Հովհաննիսյանի կողմից վիրավորական արտահայտություններ անելու մասին:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում՝ 4 կողմ և 0 դեմ ձայներով որոշեց՝

1) Հաստատված համարել «Նորավանք-07» թիմի ֆուտբոլիստ Սահակ Սահակյանի (N 35424) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 45-րդ հոդվածի 17-րդ կետով՝«Նորավանք-07» թիմի ֆուտբոլիստ Սահակ Սահակյանին (N 35424) որակազրկել 2 (երկու) խաղով և «Նորավանք ՍԱ ՍՊԸ»

ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի հնգապատիկի՝ 5.000 ՀՀ դրամի չափով։

2) Հաստատված համարել «Նորավանք-07» թիմի մարզիչ Խորեն Հովհաննիսյանի (N 34436) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 44-րդ հոդվածի 29-րդ կետով՝ «Նորավանք-07» թիմի մարզիչ Խորեն Հովհաննիսյանին (N 34436) զրկել ծառայողական պարտականությունները կատարելուց մինչև 2022 թվականի ապրիլի 1-ը ներառյալ և «Նորավանք ՍԱ ՍՊԸ» ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20.000 ՀՀ դրամի չափով։

6. 17/11/21թ. «Կիլիկիա-07»-«Արփի ՖԱ-07» (15C2010) խաղի մասին (խաղի ավարտից հետո երկու թիմերի մարզիչների միջև սկսվեց վիճաբանություն, որից հետո դաշտ ներխուժեցին հանդիսականներ)։

Կոմիտեն քննարկումների արդյունքում՝ 4 կողմ և 0 դեմ ձայներով որոշեց՝

1) Հաստատված համարել «Կիլիկիա-07» թիմի մարզիչ Բզնունի Մակիչին (N 11541) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 44-րդ հոդվածի 28-րդ կետով՝ «Կիլիկիա-07» թիմի մարզիչ Բզնունի Մակիչին (N 11541) նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն» և «Երանոսի N1 միջ/դպ» ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի տասնապատիկի՝ 10.000 ՀՀ դրամի չափով։
2) Հաստատված համարել «Արփի ՖԱ-07» թիմի մարզիչ Ղարիբյան Գևորգին (N 9576) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 44-րդ հոդվածի 28-րդ կետով Ղարիբյան Գևորգին (N 9576) նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն» և «Անդրանիկ ՖԱ» ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի հնգապատիկի՝ 5.000 ՀՀ դրամի չափով։

Ծանոթագրություն. *ՀՖՖ Կանոնակարգի 23-րդ հոդվածի 23.02 կետ. «Նկատողություն է համարվում Կարգապահական և Էթիկայի կոմիտեի կողմից ընդունված և հրապարակված որոշումը՝ իր պարտականությունների, իր կողմից կարգապահական խախտում թույլ տալու վերաբերյալ, որի չկատարումը հետագայում հանգեցնելու է ավելի խիստ պատժամիջոցների կիրառման»։*

7. 17/11/21թ. «Բենտոնիտ-07»-«Նոյեմբերյան-07» (15C1012) խաղի մասին (Հանդիպումը չի կայացել Նոյեմբերյան 07 թիմի չներկայանալու պատճառով)։

Կոմիտեն քննարկումների արդյունքում՝ 4 կողմ և 0 դեմ ձայներով որոշեց՝

Հարգելի համարել «Նոյեմբերյան-07» թիմի 17/11/21 նշանակված խաղին չներկայանալը և ղեկավարվելով ՀՖՖ Մանկապատանեկան ֆուտբոլի մրցումների անցկացման կանոնակարգի 14-րդ հոդվածով՝ դիմել ՀՖՖ Ֆուտբոլի դեպրատամենտին խաղն այլ օր նշանակելու համար։

8. 17/11/21թ. «Նիկարմ-07»-«Արարատ-2-07» (15C1011) խաղի մասին (Հանդիպումը չի կայացել Արարատ-07-ի խաղին չներկայանալու պատճառով)։

Կոմիտեն քննարկումների արդյունքում՝ 4 կողմ և 0 դեմ ձայներով որոշեց՝

Հարգելի համարել «Արարատ-07» թիմի 17/11/21 նշանակված խաղին չներկայանալը և ղեկավարվելով ՀՖՖ Մանկապատանեկան ֆուտբոլի մրցումների անցկացման

կանոնակարգի 14-րդ հոդվածով՝ դիմել ՀՖՖ Ֆուտբոլի դեպրատամենտին խաղն այլ օր նշանակելու համար ։

9. **18/11/21թ. «Ֆյունիկ-Դարակերտ-09»-«Լ.Արցախ-09» (13Մ2019) խաղի մասին (Հանդիպումը չի կայացել Լ. Արցախ-09 թիմի չներկայանալու պատճառով)։**

Կոմիտեն քննարկումների արդյունքում՝ 4 կողմ և 0 դեմ ձայներով որոշեց՝

Հարգելի համարել «Լ. Արցախ-09» թիմի 18/11/21 նշանակված խաղին չներկայանալը և ղեկավարվելով ՀՖՖ Մանկապատանեկան ֆուտբոլի մրցումների անցկացման կանոնակարգի 14-րդ հոդվածով՝ դիմել ՀՖՖ Ֆուտբոլի դեպրատամենտին խաղն այլ օր նշանակելու համար ։

10. **21/11/21թ. «Ալաշկերտ ֆզ»-«Արարատի Արաքս» (ՖԶԲԽ025) խաղի մասին (Արարատի Արաքս թիմի ներկայացուցիչը նախախաղային խորհրդակցությանը չի մասնակցել)։**

Կոմիտեն քննարկումների արդյունքում՝ 4 կողմ և 0 դեմ ձայներով որոշեց՝

Հաստատված համարել «Արարատ Արաքս» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 48-րդ հոդվածի 16-րդ կետով՝ «Արարատ Արաքս ՖԱ» ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20.000 ՀՀ դրամի չափով։

11. **22/11/21թ. «Մակարավանք ֆզ»-«Եղվարդ ֆզ» (ՖԶԱԽ014) խաղին «Մակարավանք ֆզ» թիմի ֆուտբոլիստ Մհեր Օհանյանի (N 14425) հեռացման մասին (մրցակցին խփելու համար)։**

Կոմիտեն քննարկումների արդյունքում՝ 4 կողմ և 0 դեմ ձայներով որոշեց՝

Հաստատված համարել «Մակարավանք ֆզ» թիմի ֆուտբոլիստ Մհեր Օհանյանի (N 14425) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 48-րդ հոդվածի 16-րդ կետով՝ «Մակարավանք ֆզ» թիմի ֆուտբոլիստ Մհեր Օհանյանին (N 14425) որակազրկել 2 (երկու) խաղով և «Մակարավանք» ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի տասնապատիկի՝ 10.000 ՀՀ դրամի չափով։

12. **22/11/21թ. «Մակարավանք ֆզ»-«Եղվարդ ֆզ» (ՖԶԱԽ014) խաղին «Եղվարդ ֆզ» թիմի ֆուտբոլիստ Կարեն Ղարիբյանի (N 34569) հեռացման մասին (մրցակցին խփելու համար)։**

Կոմիտեն քննարկումների արդյունքում՝ 4 կողմ և 0 դեմ ձայներով որոշեց՝

Հաստատված համարել «Եղվարդ ֆզ» թիմի ֆուտբոլիստ Կարեն Ղարիբյանի (N 34569) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 48-րդ հոդվածի 16-րդ կետով՝ «Եղվարդ ֆզ» թիմի ֆուտբոլիստ Կարեն Ղարիբյանին (N 34569) որակազրկել 2 (երկու) խաղով և «Եղվարդի հ/պետարան» ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի տասնապատիկի՝ 10.000 ՀՀ դրամի չափով։

13. **21/11/21թ. «Ռեալ Արմի Ֆուդ»-«ՖԱ Կիլիկիա» (ՍՖԱ018՝ սիրողական ֆուտբոլի առաջնություն) խաղին՝ «Ռեալ Արմի Ֆուդ» թիմի ֆուտբոլիստ Հարությունյան**

Կորյունի (N3432) հեռացման մասին (մրցակցի հանդեպ բռնարարք կատարելու համար):

Կոմիտեն քննարկումների արդյունքում՝ 4 կողմ և 0 դեմ ձայներով որոշեց՝

Հաստատված համարել «Ռեալ Արմի Ֆուդ» թիմի ֆուտբոլիստ Կորյուն Հարությունյանի (N3432) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 45-րդ հոդվածի 15-րդ կետով՝ «Ռեալ Արմի Ֆուդ» թիմի ֆուտբոլիստ Կորյունի Հարությունյանին (N3432) որակազրկել 8 (ութ) խաղով և «Արմի Ֆուդ» ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20.000 ՀՀ դրամի չափով:

14. 21/11/21թ. «Ռեալ Արմի Ֆուդ»-«ՖԱ Կիլիկիա» (ՍՖԱ018՝ սիրողական ֆուտբոլի առաջնություն) խաղին «Ռեալ Արմի Ֆուդ» թիմի ֆուտբոլիստ Գրիգորյան Տիգրանի (N9157) հեռացման մասին (մրցակցին և մրցավարներին հայհոյելու համար):

Կոմիտեն քննարկումների արդյունքում՝ 4 կողմ և 0 դեմ ձայներով որոշեց՝

Հաստատված համարել «Ռեալ Արմի Ֆուդ» թիմի ֆուտբոլիստ Տիգրան Գրիգորյանի (N9157) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 44-րդ հոդվածի 29-րդ կետով և 45-րդ հոդվածի 17-րդ կետով՝ «Ռեալ Արմի Ֆուդ» թիմի ֆուտբոլիստ Տիգրան Գրիգորյանին (N9157) որակազրկել 6 (վեց) խաղով և «Արմի Ֆուդ» ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20.000 ՀՀ դրամի չափով:

15. 21/11/21թ. «Ռեալ Արմի Ֆուդ»-«ՖԱ Կիլիկիա» (ՍՖԱ018՝ սիրողական ֆուտբոլի առաջնություն) խաղին «ՖԱ Կիլիկիա» թիմի ֆուտբոլիստ Օկոտիե Ջեսուկոբիրունի (N 36835) հեռացման մասին) (մրցակցին հայհոյելու համար):

Կոմիտեն քննարկումների արդյունքում՝ 4 կողմ և 0 դեմ ձայներով որոշեց՝

Հաստատված համարել «ՖԱ Կիլիկիա» թիմի ֆուտբոլիստ Օկոտիե Ջեսուկոբիրունի (N 36835) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 45-րդ հոդվածի 17-րդ կետով՝ «ՖԱ Կիլիկիա» թիմի ֆուտբոլիստ Օկոտիե Ջեսուկոբիրունին (N 36835) որակազրկել 3 (երեք) խաղով և «ՖԱ Կիլիկիա» ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20.000 ՀՀ դրամի չափով:

16. 26/11/21թ. «ԲԿՄԱ»-«Սևան» (ՊԼ074) խաղի մասին.
Խաղը չի կայացել «Սևան» թիմի՝ մրցաշրջանի ընթացքում երկրորդ անգամ խաղին չներկայանալու պատճառով:

Կոմիտեն քննարկումների արդյունքում՝ 4 կողմ և 0 դեմ ձայներով որոշեց՝

Հաստատված համարել «Սևան» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, այն է՝ VBET ՀՊԼ առաջնության (2021-2022 մրց.) ընթացքում երկու խաղի անհարգելի պատճառով չներկայանալը, և ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 40-րդ հոդվածի 7-րդ կետով՝ «Սևան» թիմին հեռացնել VBET ՀՊԼ առաջնությունից և զրկել սույն մրցաշրջանում ՀՖՖ հովանու ներքո անցկացվող այլ մրցաշարերին մասնակցելու իրավունքից, և «Սևան ՖԱ» ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի՝ 500.000 ՀՀ դրամի չափով, հաջորդ մրցաշրջանում միայն Առաջին խմբի առաջնությունում հանդես գալու հնարավորությամբ:

Նախագահ՝ Կարեն Հովհաննիսյան

Անդամ և քարտուղար ՝ Հայկուհի Ռշտունի

Անդամներ՝ Բաբկեն Ղալոյան

Արման Ալաբերքյան

<u>Հիշեցում՝</u>

1. **Հոդված 19. Կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկումը**

   Կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումները ֆուտբոլային սուբյեկտների կողմից կարող են բողոքարկվել ՀՖՖ Բողոքարկման կոմիտե՝ որոշման մասին պաշտոնական հրապարակման պահից 7 (յոթ) օրվա ընթացքում, իսկ այդ դեպքում, երբ ֆուտբոլային սուբյեկտը դիմել է գործի հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 7-օրյա ժամկետը սկսում է հոսել այդ հիմքերը ստանալու պահից:

2. **Հոդված 28. Պատասխանատվության միջոցի կիրառման ընդհանուր սկզբունքները**

   28.05 Սույն կանոնակարգում ներառված՝ ֆուտբոլիստի և/կամ թիմի անձնակազմի անդամի ստացած դեղին քարտերի հետ կապված որակազրկումները (սույն կանոնակարգի 41- րդ, 45-րդ, 47-րդ և 49-րդ հոդվածների 1-ից 13-րդ կետերը) կիրառվում են առանց ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշման:

3. **Հոդված 25. Ֆուտբոլիստների, թիմի անձնակազմի և ակումբի պաշտոնյաների պատասխանատվությունը**

   25.20 Ֆուտբոլիստների, թիմի անձնակազմի, ակումբի պաշտոնյայի սույն կանոնակարգի 41- րդ, 45-րդ, 47-րդ և 49-րդ հոդվածների 1-ից 13-րդ կետերով սահմանված խախտումների հաշվառումը կատարում է համապատասխան ակումբը՝ առանց ՀՖՖ-ի Կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշման:
   25.21 25.20 կետի պահանջները ակումբի կողմից չպահպանելը հանգեցնում է այդ ակումբի նկատմամաբ կարգապահական պատժամիջոցի՝ տեխնիկական պարտություն:

4. Հոդված 44-ի և 45-ի կիրառվող պատժամիջոցների տուգանքները սահմանված են ՀՀ Մ-18-16 առաջնություններին մասնակցող ֆուտբոլիստների համար: Մ-15 և ցածր տարիքային խմբերի առաջնություններին մասնակցող ֆուտբոլիստների տուգանքները և պատժամիջոցները սահմանված են նախորդի 50%-ի չափով: Հոդված 44-ի և 45-ի

կիրառվող պատժամիջոցները սահմանվում են նաև ՀՀ Սիրողական ֆուտբոլի առաջնություններին մասնակցող սուբյեկտների համար: